



ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, 31 ՄԱՐՏ, 2025

ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՊՈԹՔ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւնն Հօր Յիսուս, Կուր ինձ իմաստութիւնն պարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեալս. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

ՇԱՐԱԿԱՆ

Սուրբդ սրբոց Երրորդութիւնն, զմեզ մաքրեա քեզ բնականութիւն.
Շնորհեա ընդ մանկանցն առազաստի հանգչիլ ընդ քեզ ի յանկողնի.
Տուր զհայցուած բարեկամին զփոխ երից նկանակին.
Չի ի տուրնջեան և զհշերի տացուք քեզ փառս անյոելի:

ՀԱԿԱՏՈՎ ԽՈՍՏՈՎԱՆԻՄ

Ամենախնամ Տէր, դիր պահապան աչաց իմոց զերկիւղ քո սուրբ՝ ոչ եւս հայել յարար, եւ ականջաց իմոց ոչ ախորժել լսել զբանս չարութեան, եւ բերա-նոյ իմոյ ոչ խօսել զսպութիւն, եւ սրտի իմոյ ոչ խորհել զչարութիւն, եւ ձեռաց իմոց ոչ գործել զանիրաւութիւն, եւ ոտից իմոց ոչ գնալ ի ճանապարհս անօրէ-նութեան. այլ ուղղեա՛ զշարժումն սոցա լինել ըստ պարտաւորանաց քոց յամենայնի:

Հուր կենդանի Քրիստոս, զհուր սիրոյ քոյ՝ զոր արկեր յերկիր՝ բորբոքեա՛ յանձն իմ. զի այրեսցէ զաղս հոգւոյ իմոյ, եւ սրբեսցէ զխիղճ մտաց իմոց, եւ մաքրեսցէ զմեղս մարմնոյ իմոյ, եւ վառեսցէ զլոյս գիտութեան քո ի սրտի իմում:

Կամեցող բարեաց, Տէր կամարար, մի՛ թողուր զիս ի կամս անձին իմոյ գնալ, այլ առաջնորդեա՛ ինձ լինել միշտ ըստ կամաց քոց բարեսիրաց. եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ բազմամեղիս:

ՇԱՐԱԿԱՆ - ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾ

Սուրբ Աստուած, սուրբ եւ հօգօր, սուրբ եւ անմահ, որ յայտնեցար վասն մեր, ողորմեա մեզ: (X3)
Փրկել զմեզ ի փորձութենէ եւ յամենայն վտանգից մերոց: Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք: Վասն լսելի լինելոյ Տեառն Աստուծոյ ձայնի աղաչանաց մերոց՝ բարե-խօսութեամբ սուրբ Աստուածածնին, եւ իջանելոյ ի վերայ մեր ողորմութեան եւ գթութեան Տեառն Աստուծոյ: Ամենակալ Տէր Աստուած մեր, կեցո՛ւ եւ ողորմեա:

ՇԱՐԱԿԱՆ - ԱՊՈԹՔ

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:
Վմենասուրբ Երրորդութիւնն, սուր աշխարհիս խաղաղութիւնն:
Եւ Հիւանդաց բժշկութիւնն, ննջեցերոց արքայութիւնն:
Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւեն ես նեղերոց:
Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:

ՍԱՂՄՈՍ 79

ԱՂՈԹՔ ԱԶԳԻՆ ԱԶԱՏԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

Ով Աստուած, հեթանոս ազգեր տիրապետութեանդ սահմանները մտան,
Քու սուրբ տաճարդ պղծեցին, Երուսաղէմը աւերակի վերածեցին:
Քեզի ծառայողներուն դիակները կեր դարձուցին գիշակեր թռչուններուն,
Քեզի հաւատարիմ մարդոց մարմինները կեր դարձուցին վայրի գազաններուն:
Երուսաղէմի չորս կողմը ջուրի պէս հոսեցուցին անոնց արիւնը,
Եւ չկար մէկը որ թաղէր գանոնք:
Մեր դրացի ժողովուրդներուն նախատինքի առարկան դարձանք,
Ծաղր ու ծանակը՝ մեր շուրջ գտնուողներուն:
Տէր, մինչեւ ե՞րբ բարկացած պիտի մնաս,
կրակի պէս միշտ բորբոքած պիտի մնայ նախանձախնդրութիւնըդ:
Քեզ չնանչցող ազգերուն վրայ թափէ գայրոյթդ,
այն թագաւորութիւններուն՝ ուր Քեզ չեն պաշտեր:
Որովհետեւ անոնք լափեցին Քու ժողովուրդդ,
աւերակի վերածեցին մեր երկիրը:
Մի յիշեր մեր անցեալի յանցանքները, փութով եկուր ողորմէ մեզի,
որովհետեւ յետին թշուառութեան հասանք:
Օգնէ մեզի, ով մեր փրկիչ Աստուածը, Քու անունդ փառաւորելու համար.
ագատէ մեզ եւ քաւէ մեր մեղքերը, անունդ բարձր պահելու համար:
Զըլլայ երբեք որ հեթանոս ազգերը ըսեն. «Ո՞ւր է ասոնց Աստուածը»:
Ով Տէր, թող մեր աչքերով տեսնենք վրէժխնդրութիւնդ,
Եւ ազգերը հասկնան՝ թէ ինչպէս Դուն կը պատժես
ծառաներդ սպաննողները:
Լսէ գերի տարուածներուն հառաչանքները,
Քու մեծ կարողութեամբդ ինայէ մահուան դատապարտուածներուն:
Եօթնապատիկ հատուցանէ Դուն, ով Տէր,
մեր դրացի ազգերուն, որոնք անչափօրէն Քեզ նախատեցին:
Որպէսզի մենք, Քու ժողովուրդդ, Քու հօտիդ ոչխարները,
յաւէտ շնորհակալութիւն յայտնենք Քեզի,
սերունդէ սերունդ անդադար Քե օրհներգենք:



ԱՂՕԹԸ ԱԶԳԻՆ ԱԶԱՏԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ 79:1-13

Այս աղօթք-Սաղմոսը խնդրանք է ազգի ազապագրման համար: Ասա՛ք, որ հեղինակն է այս Սաղ-մոսին, նախ կը ներկայացնէ, թէ ինչպէս հեթանոս ազգեր Աստուծոյ փրկապետութեան փակ եղող սահ-մանները մտեր են, Անոր սուրբ փաճարը պղծեր են, եւ Երուսաղէմը ատերակի վերածեր են: Աստուծոյ ծա-ռաներուն եւ Անոր հաւաքարիմ մարդոց դիակները կեր դարձուցեր են գազաններուն եւ գիշակեր թռչուն-ներուն, ինչո՞ւ, որովհետեւ մէկը չկայ որ թաղէ: Հերաքրքրական է, որ հրէական մրաժողութեան մէջ, մե-ռել ջթաղել անարգել կը նշանակէ, նաեւ յափտենակն կեանքի յոյսէն զրկել: Այս ժամանակահատուածը Բաբելոնի յարձակումն է եր

Ասա՛ք հարց կու փայ թէ այս վիճակը մինչեւ երբ պիտի փութ, եւ ընդհակառակը կը խնդրէ որ Աստուած Իր գայրոյթը գինք չճանչցող ազգերուն վրայ թափէ: Որովհետեւ անոնք էին որ ատերակի վե-րածեցին երկիրը եւ ժողովուրդը լափեցին: Կը հասնի պահը խոստովանութեան: Ուրեմն, այս հար-ուածները ի գուր փեղ չեն, բանի մը հետեւանքն է: Ասով Աստուած կուգէ որ ժողովուրդը անդրադառնայ ու դարձի գայ: Ահա Ասա՛ք կը խնդրէ, որ Աստուած ջիշէ անցեալի յանցանքները, շուրով գայ եւ ողորմի: Օգնութեան խնդրանք, ազապումի եւ մեղքերը քաւելու աղօթք, որպէսզի անով Աստուծոյ անունը փա-ռաւորուի եւ բարձր պահուի: Ինչո՞ւ, որպէսզի չլլայ թէ հեթանոս ազգերը ըսեն, «Ո՛ր է ասոնղ Աստ-ուածը»:

Ասա՛ք նաեւ կը խնդրէ Աստուծմէ որ լսէ գերի փարուածներուն հառաչանքը եւ խնայէ մահունա դապարապարուածներուն: Ան նաեւ կը խնդրէ որ Աստուած արդարօրէն հապուցանէ ազգերուն, որոնք Աստուծոյ փաճաչը կործանեցին, քաղաքը ատերեցին եւ Աստուծոյ անունը անարգեցին:

Իսկ վերջին բաժնով, Ասա՛ք կու գայ խոստովանելու եւ ընդունելու Աստուած որպէս Հովիւը Իր ժո-ղովուրդին: Ոչխարներ, որոնք շեղեցան, մոլորեցան, եւ իրենց գլուխ գալիքը զիրենք սթափեցուց, որ-պէսզի անդրադառնան եւ գղջումով ու խոստովանութեամբ Աստուծոյ վերադառնան: Ահա Ասա՛ք խօս-նակը կը դառնայ իր ժողովուրդին եւ այդ գղջումն ու խոստովանութիւնը կը կապարէ, որպէսզի Աստուած իրենց ողորմի, մեղքերը քաւէ եւ օգնէ, եւ իրենք սերունդէ-սերունդ վերադառնան ճշմարիտ Աստուած-պաշտութեան:

Այս Սաղմոսը նաեւ յիշեցում է այսօր մեզի մեր վիճակին ու կացութեան, ինչ բանի մէջով որ կ'անցնինք ուրիշ բան չէ եթէ ոչ մեր մեղքին վարձքը: Անոր համար ալ երեկուան խոչհուրդը Դապաւորի Կիրակի, կու գայ մեզ յիշեցնելու, անդադար աղօթելու եւ արդար Դապաւորէն մեղքերուն քաւութիւն եւ թողութիւն խնդրելու, որպէսզի Աստուած ողորմի: Երկրորդ գինք ընդունելու որպէս մեր ճշմարիտ Հո-վիւր եւ Իրեն երթալու, եւ ամբողջութեամբ Իր հովանիին փակ ըլլալու: Ոչ թէ միայն երբ նեղութեան ու դժուարութեան մէջ ենք Իրեն դիմելու, յետոյ որ դուրս եկանք այդ կացութենէն, դարձեալ վերադառնալու նախկին վիճակին: Ընդհակառակը, ամբողջութեամբ Իրեն վերադառնալու եւ ալ ուրիշ փեղ չերթալու: Անոր համար ալ այս հարուածները խորքին մէջ առիթ են ապաշխարութեան: Մե՛ծ պահքի շրջանը լուս-գոյն առիթ է ապաշխարութեան, վերադարձ առ Աստուած: Թող ամենաբարին Աստուած լսէ մեր աղա-չանքը եւ ողորմի:

Պահապան ամենայնի Քրիստոս,
 աջ է՛ն հովանի լիցի ի վերայ իմ ի տուէ եւ ի գիշերի,
 ի նստիլ ի տան, ի գնալ ի նանապարհ,
 ի ննջել եւ ի յառնել, զի մի երբե՛ք սասանեցայց.
 եւ ողորմեա՛ ին արարածոց եւ ինձ բազմամեղիս: